

25.8.96

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ. ՄԻԱՅԵՔ

ՀՐԱՄԱՆ ԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԸՐԳԵԼԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՎՈՐԻՑԵԼՈՒ ԿԱՐՅՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ № 14

ՄԱՍՆԱՎՈՐ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵԼ
ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(ԽԵԲԲԵՐԻ մատչելի պարզաբանություն)

0.9.09.2013

25896

15 JAN 2010

334.1

ԹՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

Հ - 11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱԽԱ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԿՐ

ԳԻՐՔ № 14

ՄԱՍՆԱՎՈՐ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ԽՈՐՅՈՒԴԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(Որենքների մասշելի պարզաբանություն)

1003
14654

ՏԵՐԵՎԱՆ

1928 Թ.

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ
ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զնայած վոր վերջին յերեք տարվա ընթացքում
ՀՀ առնված միջոցների չնորհիվ մի շաբաթ խոչոր
ուրդյունաբերական կենտրոններում բանվորների բնա-
կարանային վիճակը վորոշ չափով լավացել է, բնա-
կարանային գործի գրությունը ԽՍՀ Միության ամբողջ
տերրիտորիայի վրա գեռևս ծանր է:

Առաջնակարգ նշանակություն տալով յերկրի
ինդուստրացման դորժում բանվորական բնակարան-
ների շինարարությանը և բնակարանային ու կոմու-
նալ անտեսության ընդհանուր գրության բարելավ-
մանը, այլ և հերթական խնդիր համարելով արդյունա-
րելության ու տրանսպորտի բանվորների համար բնա-
կելի տարածության հետագա ընդարձակումն ապահո-
վելը, ԽՍՀ Միության կենտրոնական Գործադիր Կոմի-
տեն և Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը բնա-
կարանային ճգնաժամը լուծելու համար անհրաժեշտ են
համարում.

1. Ուժեղացնել նոր բնակարանների շինարարու-
թյան տեմպը,

2. Հենց բնակարանային անտեսության ներսում
առավելագույն չափերով միջոցներ կուտակել, մաս-

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ Ի ՅՈՒԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3388
ԳՐԱՓԵԹ. 791 F. ՏԱՐԱԺ 1500.

նավորապես ի հաշիվ բնակարանային վարձի ,

3. Բնակարանային Փոնդի տնութիւնումն ու չահա-
գործումը կանոնավոր և նախառակահարմար հիմքերի
վրա դնել .

4. Ամրապնդել և զարգացնել կոռպերատիվ բնակա-
րանային շինարարությունը ,

5. Հնարավորության սահմաններում մեծ չափերով
բնակարանային շինարարության մեջ գրավել մասնա-
վոր կապիտալը ,

6. Եժանացնել բնակարանային շինարարությունը
և կարգավորել նրա կազմակերպումը :

Մատնանշված խնդիրները լուծելու հայտակով
ԽՀՍ Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեն և
Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը վորոշում են .

I ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՅԵԼ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԶԱՐԿ ՏԱԼԸ

1. Սահմանել , վոր ժողովրդական տնտեսության
հեռանկարային պլանները կաղմելիս պետք է համեր
առնել բանվորական բնակարանների շինարարության
զարգացման անհրաժեշտությունն առաջին հերթին այն
քաղաքներում , վորտեղ տեղի յե ունենում ուժեղ տըն-
տեսական աճում և միաժամանակ առանձնապես սուր
բնակարանային ճգնաժամ և զգացվում :

Սրա համեմատ՝ յերկրի ինդուստրացման , ինչպես
նաև շինարարության առավելացույն եֆեկտի հաս-
նելու տեսակետից՝ միջոցների բաշխումը պետք է կա-
տարվի առավել ուսցիոնալ կերպով :

2. Առաջարկել գաշնակից հանրապետությունների
կառավարություններին հատուկ Հոկոդություն սահ-

մանել , վորպեսզի սուր բնակարանային ճգնաժամ
զգացող քաղաքների և քաղաքատիպ վայրերի տեղա-
կան բյուջեներով բնակարանային շինարարության հա-
մար նախառակվեն առավելադույն և տարեց-տարի ա-
մելացվող հատկացումներ :

3. Բնակարանային շինարարության և կոմունալ
րաբեկարդության ծրագրերը համաձայնեցնելու նպա-
տակով սահմանել , վոր կոմունալ ձեռնարկություն-
ների և կառուցվածքների շինարարության համար հատ-
կացվող վարկերի չափը պետք է լինի բնակարանա-
յին շինարարության համար կոմունալ Տնտեսության

և Բնակարանային Շինարարության կենտրոնական
Բանկի միջոցով բաց թողնվող վարկերի լին առաջնական
գումարի 15%-ից վոչ պահանջությունը կոմունալ 15%

Ծանոթություն .—կոմունալ Տնտեսության և
Բնակարանային Շինարարության կենտրոնական
Բանկի միջոցով կոմունալ ձեռնարկությունների
ու կառուցվածքների շինարարության համար բաց
թողնվող վարկերը կարող են տրվել նույն տեսակի
այն շինարարության համար , վոր բանվորական
ավաններում կառուցում են արդյունաբերության ,
արանսպորտի և կապի ձեռնարկությունները ու
բնակարանա-շինարարական կոռպերացիան տեղա-
կան խորհուրդների կողմից իրազործվող բնակա-
րանային շինարարության ըջաններից դուրս :

4. Բանվորական բնակարանների հիմնական կառու-
ցուներ համարել արդյունաբերության և տրանսպորտի
ձեռնարկություններն ու տեղական խորհուրդներն այն
պայմանով , վոր շինարարությունը խոչոր քաղաքնե-

բուժ կատարեն մեծ մասայիք տեղական խորհուրդները : Իսկ արդյունաբերության և տրանսպորտի ձեռնարկությունների աւելացնարկության և տրանսպորտի ձեռնարկությունների աւելացնարկության վրա բանվորական բնակուրանային շինարարությունը, ինչպես նաև արդյունաբերության և տրանսպորտի համար բանվորական տվանների շինարարությունը այն ուայոններում, վորտեղ անդական խորհուրդները բնակարանային շինարարությամբ չեն կարող զբաղվել իրենց սուլ բյուջեների հետանքով, կատարում են արդյունաբերության և տրանսպորտի ձեռնարկությունները :

5. Նկատի ունենալով, վոր բնակարանա-շինարարական կոսպերացիան պետք է զգալի գեր խաղա շինարարության մեջ, և վոր իրական աշխատավարձի բարձրացման և շինարարական վարդի ու շինարարության եժանացման հողի վրա զգալիորեն մեծանում են բանվորական բնակչությանը բնակարանա-շինարարական կոսպերացիայի սոսպարեղ քաշելու և այդպիսով բանվորների ու ծառարողների սեփական միջոցները այդ գործի մեջ զբավելու հնարավորությունը, անհրաժեշտ համարել, վորպեսզի շինարարության մեջ կոսպերացիայի աեսակար կշիռ և բնակարանային շինարարության համար բաց թողնվազ պետական վարդերից նրան տրվող բաժինն ավելանա՝ նրա սեփական փայտական միջոցների փաստական աճման համեմատ :

Բնակարանա-շինարարական կոսպերացիան վարկավորելու գեպօւմ պետք է յենել նրան խրախուսելու անհրաժեշտությունից այն շրջաններում, վորտեղ բնակարանային շինարարության զարգացումը նախատեսված և պլանով :

6. Նպաստակահարմաք համարել անհատական բանվորական բնակարանային շինարարության հետագա բնդարձակությունը բանվական ավանդներում և արդյունաբերական շրջաններում, վորտեղ կենցաղային և տրնտեսական պարմանները թույլ չեն տալիս բավականաշափ զարգացնել խոչըր պետական և կոռուպերատիվ բնակարանային շինարարությունը։ Փոքր քաղաքներում, նմանապես և տմարանցային և կուրորտային ավաններում, արդյունաբերական շրջաններից գուրս մատնանշված շինարարությունն ընդուրձակելու նպատակահարմարության հարցը վճռում են համապատասխոն աեղական խորհուրդները։

Հանձնարարել կոմունալ Տնտեսության և Բնակարանային Շինարարության Կենտրոնական Բանկին բնակարանային կոսպերացիայի կենարոնների մասնակցությամբ մշակել այն անհատական կառուցող բանվորներին վարկավորելու արտոնյալ ձեռքի հարցը, վորոնք շինարարությունը իրազործում են կոլեկտիվ հիմունքներով։

Առաջարկել դաշնակից Հանրապետաւթյունների կառավարություններին սահմանել տարբեր շրջաններում շինարարաստությունների առանձին կառեգորիաների համար բնակելի տարածության միավորի արժեքի լիմիտները, վորոնք պետք է հիմք ծառայեն վարկավորման չափերը վորոշելու համար։ Այդ լիմիտները վորոշելու գեպօւմ պետք է յենել 1927-1928 տարում շինարարության արժեքը անցած տարվա համեմառնությամբ առնվազն 15%-ով իջեցնելու անհրաժեշտությունից։

8. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կառավարություններին կարգավորել .

ա) քաղաքների և քաղաքային ավանների հաստակագծման հարցը, աչքի առաջ ունենալով շինարարության կարիքները և տարեբային բնակարանային շինարարության կանոնավորման անհարաժեշտությունը, վորդժվարացնում և քաղաքների և քաղաքային ավանների պլանաշափ աճումը և առաջացնում և նրանց բարեկարգության համար անարդյունավետ ծախքեր,

բ) նոր կառուցվող բանվորական ավաններում կոմունալ բարեկարգության Փինանսավորման համար հատկացված հաստուկ կապիտալի կազմելու հարցը,

գ) կառուցողների բոլոր կատեգորիաների կողմից կառարգող բնակարանային շինարարության խոշորացման և կենտրոնացման հարցը,

դ) կոմունալ բարեկարգության ձեռնարկումները բնակարանների շինարարության հետ համաձայնեցնելու հարցը,

է) անհատական բանվորական բնակարանային շինարարությունը կանոնավորելու հարցը,

զ) բնակարանային ֆոնդը՝ վերին հարկեր կառուցելու և քաղաքամերձ ավանները հաղորդակցության բարելավման հիման վրա առավելագույն չափերով սպազործելու միջոցով ընդարձակելու հարցը,

ը) ինչպես մշտական նստակեցություն չունեցող բանվորների (բեռնակիրներ, կառուցողներ և այլն), նմանապես և բանվոր-միայնակների համար տեղական խորհուրդների կողմից հանրակացարաններ կառուցելու հարցը :

Առաջարկել դաշնակից հանրապետությունների կառավարություններին յերեք ամիս ժամանակամիջուցում վերոհիշյալ հանձնարարությունները կատարելու մասին գեկուցում ներկայացնել ԽՍՀ Միության ժողովրդական կոմիտեների խորհրդին :

9. Հանձնարարել Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին առընթեր Շինարարության Հանձնաժողովին մշակել տեխնիկական և կաղմակերպչական ձեռնարկումներ 1927-1928 տարում շինարարության արժեքը առնվազն 15%-ով իջեցնելու վերաբերյալ՝ ԽՍՀ Միության կառավարության դիրքեկտիվներն իրագործելու համար, նմանապես և միջոցներ ձեռք առնել, վորպեսզի սահմանվեն զանազան նյութերից շինվող բընակելի տների առավել ուսցիոնալ տիպեր, հաշվի առնելով տեղական պայմաններն ու բանվորական կենցաղի պահանջները տարբեր շրջաններում :

II ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՖՈՆԴԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

10. Բնակարանային վարձը բնակարանների շահագործման բնակարգեքին մոտեցնելու նպատակով անհրաժեշտ համարել 1928 թ. ապրիլի 1-ից սահմանել բնակարանային վարձի նոր նորմաներ հետեւյալ հիմունքներով.

ա) բնակարանային սակացույց սահմանելիս լիովին հաշվի առնել բնակարանների վրակեր և տերրիտորիալ դասավորումը բնորոշող բոլոր տարրերը.

բ) բնակարանային սակացույցի գեղչերի չափերը վերաբննելիս նկատի ունենալ աշխատավարձի չափը —

այն հաշվով, վորագետի 1927-1928 և 1928-1929 թ. թ. ընթացքում բնակարանի ինքնարժեքից պակաս վճարող անձանց բնակարանային վարձի կոստարները բարձրացվեն ամիսը մեկ քառ. մետրի համար առնվազն 10 կոտ., բացառությումբ գործազուրկների և 20 ոռոքուց վոչ ափելի յեկամուտ ունեցող անձանց : Սակայն միաժամանակ այն բանվորների, ծառայողների և նրանց հավասարեցված անձանց բնուանիքի բոնած միջին տարածության բնակարանային զուտ վարձը, վորոնց բնակարանավարձն այս կետի համաձայն ավելանում է, պետք և կազմի նրանց բյուջեյի 10%-ից վոչ ավելի:

Առաջարել գաչնակից հանրապետությունների կառավարությաններին 1928 թ. մարտի 1-ից վոչ ուշ ներկայացնել ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդին այս հոգվածի «բ» կետի վերաբերյալ իրենց յենթագրությունները, նկատի ունենալով, վոր այս միջոցի իրագործումը պետք է անպատճառ կախված լինի իրական աշխատավարձի այնպիսի հավելումից, վորը գերազանցեր բնակարանային վարձի աճումը և բարձրացներ բանվորների կյանքի ընդհանուր մակարդակը:

11. Անհրաժեշտ համարել, վորագետի 1928 թ. սուրբի մեկից տեղական խորհուրդների և արդյունաբերության ու տրանսպորտի ձեռնարկությունների նոր շնած (սկսած 1924 թ.) տներում բնակարանային վարձ սահմանվի չին տներում դանձվող բնակարանային վարձի հետ միանման չիմունքներով, թույլ տալով հավելում անել (մտցնելով փոխառվության շիջուցումը և փոխառվության սու-

կոմիսերի վճարումը) այս վորոշմամբ չին տների համար սահմանված բնակարանային վարձի 25%-ից վոչ ավելի չափերով: Այդ հավելումը պետք և պակասեցվի չին տների բնակարանային վարձի բարձրացման համամատ, մինչեւ վոր չին և նոր տների բնակարանային վարձը լիովին հավասարվեն իրար:

12. Բանվորական բնակարանային շինարարության համար տրվող փոխառվությունների տոկոսը սահմանել տարեկան 1%-ից վոչ ավելի:

Հանձնաբարել ԽՍՀ Միության աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատին, Արհեստակցական Միությունների Համամիութենական Կենտրոնական Խորհրդի և Կոմունալ Տնտեսության ու Բնակարանային Շինարարության Կենտրոնական Բանկի մասնակցությամբ, նաև մասնակից դարձնելով ԽՍՀ Միության ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին, Հազորդակցության ձանապարհների Ժողովրդական Կոմիսարիատին և բնակարանային կոոպերացիայի հիմնարարներին, ստորև մատնանշված չիմունքներով մշակել և ներկայացնել 1928 թ. հունվարի 1-ին ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդին փոխառվությունների վիճուցման և նրանց համար տոկոսներ վճարելու այնպիսի սիստեմի նախագիծ, փորով նախառվածք լինեն 11 հոդ. մատնանշված տների շահագործման անվնասաբերության դեպքում—վճարումների սկակասեցումը առաջին տարիներում և նրանց աստիճանական ավելացումը հետադատառություններուան նայած աշխատավարձի բարձրացմանը, բանվորների կյանքի մա-

այն հաշվով, վորպեսզի 1927-1928 և 1928-1929թ. թ. ընթացքում բնակարանի լինքնարժեքից պակաս վճարող անձանց բնակարանային վարձի կոպարները բարձրացվեն ամենը մեկ քառ. մետրի համար առնվազն 10 կուգ., բացառությամբ գործադարձությունը և 20 ոռորուց վոչ ավելի յեկամուտ ունեցող անձանց : Սակայն միաժամանակ այն բանվորների, ծառայողների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքի բոնած միջին տարածության բնակարանային զուտ վարձը, վորոնց բնակարանավարձն այս կետի համաձայն տվելանում և, պետք և կազմի նրանց բյուջեյի 10%-ից վոչ ավելի:

Առաջարկել գաշնակից հանրապետությունների կոռուպտարություններին 1928թ. մարտի 1-ից վոչ ուշ ներկայացնել ԽՍՀ Միության ժողովրդական կոմիտեների Խորհրդին այս հոգվածի «բ» կետի վերաբերյալ իրենց յինթարքությունները, նկատի ունենալով, վոր այս միջոցի իրավուրծումը պետք և անպատճառ կախված լինի իրական աշխատավարձի այնպիսի հավելումից, վորը գերազանցեր բնակարանային վարձի աճումը և բարձրացներ բանվորների կյանքի բնդիմանուր մակարդակը:

11. Անհրաժեշտ համարել, վորպեսզի 1928թ. ապրիլի մեկից տեղական խորհուրդների և արդյունաբերության ու արանապորտի ձեռնարկությունների նոր շինած (սկսած 1924թ.) աներում բնակարանային վարձ սահմանվի հին տներում գանձվող բնակարանային վարձի հետ միանման հիմունքներով, թույլ տալով հավելում անել (մացնելով փոխառվության շիջուցումը և փոխառվության առ-

կոսների վճարումը) այս վորոշամբ հին տների համար սահմանված բնակարանային վարձի 25%-ից վոչ ավելի չափերով: Այդ հավելումը պետք և պակասեցվի հին տների բնակարանային վարձի բարձրացման համեմատ, մինչև վոր հին և նրա տների բնակարանային վարձը լիովին հավասարվեն իրար:

12. Բանվորական բնակարանային շինարարության համար արգող փոխառվությունների տոկոսը սահմանել տարեկան 1%-ից վոչ ավելի:

Հանձնարարել ԽՍՀ Միության աշխատանքի Ժողովրդական կոմիտեի առաջնորդին, Արհեստակցական Միությունների շամամիութենական կենտրոնական Խորհրդի և Կոմունալ Տնտեսության ու Բնակարանային Շինարարության կենտրոնական Բանկի մասնակցությամբ, նաև մասնակից գարձնելով ԽՍՀ Միության ժողովրդական Տերագույն Խորհրդին, Հաղորդակցության ձանապարհների ժողովրդական կոմիտեի առաջնորդին կոոպերացիայի կինոռոններին, ստորև մատնանշված հիմունքներով մշակել և ներկայացնել 1928թ. հունվարի 1-ին ԽՍՀ Միության ժողովրդական կոմիտեների Խորհրդին փոխառվությունների շիջուցման և նրանց համար տոկոսներ վճարելու այնպիսի սիստեմի նախադիմ, վորով նախառելում լինեն 11 հոգ. մատնանշված տների շահագործման անվնասարերության դեպքում—վճարումների պակասեցումը առաջին տարիներում և նրանց աստիճանական ավելացումը հետագա տարիներում՝ նայած աշխատավարձի բարձրացմանը, բնանվորների կյանքի մաս-

կարգակի բարձրացմանը, նմանապես և տների շինաւրարության ու շահագործման եժանացմանը:

Փոխատվությունների շիջուցման այդ սիստեմը մշակելու ժամանակ պետք է յիշակետ ունենալ՝

ա) քարե տների համար փոխատվությունների 60 տարվա ժամանակամիջոցը և փայտե տների համար 45 տարվա ժամանակամիջոցը, նկատի ունենալով տունը բնակվելու համար պատրաստ լինելուց հետո առաջին յերեք տարվա ընթացքում միայն փոխատվության տոկոսների վճարում սահմանելու հնարավորությունը, առանց փոխատվության շիջուցման,

բ) փոխատվությունների տոկոսների չափերի տարրեականությունը՝ տարեկան մի քառորդ տոկոսից մինչև մեկ տոկոս։

13. Տեղական խորհուրդների և արդյունաբերության ու արանսպրափի ձեռարկությունների համար փոխատվությունների շիջուցման և փոխատվությունների տոկոսների վճարման վերը նախատեսված սիստեմը (12 Հոդ.) տարածել նաև պետական վարկից ողափոր բանվորական բնակարանաշինարարական կոոպերատիվների վրա այն պայմանով, վորագեսպի նրանց տներում անդամների միջին ամռական մուծումները (տան պահպանության, փոխատվության շիջուցման և փոխատվության տոկոսները վճարելու համար) չգերազանցեն համապատասխան տեղական խորհուրդների ու ձեռնարկությունների նոր շինած տների համար սահմանված միջին բնակարանային վարձից։

14. Վերը նախատեսված (12 և 13 Հոդվածներ) փոխատվությունների շիջուցման և նրանց տոկոսների

վճարման կարգը տարածել 1924 թվից տրված բոլոր փոխատվությունների այն մասի վրա, վորի շիջուցման ժամկետը չի լրացել մինչև փոխատվությունների շիջուցման վերոհիշյալ սիստեմը կիրարկության դնելը։

15. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կառավարություններին վորոշումներ հրապարակել, վորոնց մեջնախառնեաված լինի քաղաքներում, նմանապես և բանվորական, կուրորտային և ամարանոցային ավաններում բնակարանային հատուկ ֆոնդի կապետական կազմելը բացառապես մունիցիպալ ֆոնդի բնակարաններ կառուցելու, վերականգնելու և հիմնավորապես նորոգելու նպատակով, միաժամանակ վորոշելով, վոր հիշյալ կապիտալների մեջ մտնում են։

ա) տեղական համապատասխան խորհուրդների կողմից անմիջաբար չահագործվող բնակելի չենքերի զուտ յեկամուտը և շիջուցման գումարները,

բ) տեղական համապատասխան խորհուրդների կողմից վարձով տրվող բնակելի տների վարձագինը,

գ) տեղական խորհուրդների կողմից պետական չիմարկություններին դիվանատների և վոչ առետական ու վոչ արդյունաբերական բնույթ կրող կարեների համար տրամադրվող չենքերի վարձագինը,

դ) որևէնքով թույլատրված դեպքերում մունիցիպալ շինությունների վաճառքից ստացված գումարները,

ե) առետարա-արդյունաբերական և պահեստային չենքերի վարձագանարից կատարվող մասնատրությունները տեղական համապատասխան խորհուրդների սահմանված չափով, բայց 50%-ից վոչ պակաս,

գ) տեղական համապատասխան խորհուրդների վո-
րոշումներով սահմանված այլ յեկամուտները,

Ը) բնակարանային Փոնդի համապատասխան Հա-
տուկ կապիտալների տոկոսները :

III ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

16. Ինչպես քաղաքայնացված, նույնպես և ար-
դյունաբերության և տրանսպորտի ձեռնարկություն-
ների իրավասության տակ գտնվող բնակարանային
Փոնդի ոգտագործումը կարգավորելու համար—բան-
վորներին ու ծառայողներին կանոնավոր կերպով տե-
ղակորելու նպատակով—պարտավորեցնել դաշնակից
հանրապետությունների կառավարություններին իրա-
կանացնել հետեւյալ ձեռնարկումները —

ա) հիշյալ Փոնդի մեջ մտնող բնակելի տները
պետք է շահագործվեն տեղական խորհուրդների և
ձեռնարկությունների կողմէից ըստ պատկանելույն անմի-
ջարար կամ վարձով տալու կարգով (բնակարանա-
վարձակալական կոռպերատիվ ընկերություններին պե-
տական հիմնարկություններին ու ձեռնարկություն-
ներին և այլ հասարակական կազմակերպություն-
ներին ու միանձնյա վարձակալներին) այն պայ-
մանով սակայն, վորպեսզի վարձատրության պայ-
մանագրերի մեջ հիշատակություն լինի այն մա-
սին, թե համապատասխան տեղական խորհուրդներն
ըստ ուսականելույն իրավունք ունեն այլ տների բր-
նակեցման գործը կարգավորելու .

բ) տեղական խորհուրդների ու արդյունաբերու-

թյան և տրանսպորտաի ձեռնարկությունների անմիջա-
կան շահագործման տակ գտնվող տներում բնակարան-
ներն ու սենյակները տրվում են առանձին վարձողների
հետ կնքված պայմանագրերի հիման վրա, վորոնց մեջ
ճիշտ կերպով նախատեսվում են բնակիչների պարտա-
կանությունները բնակարանները կանոնավոր վիճակում
պահելու վերաբերմամբ, իսկ «գ» կետում մատնա-
նշված տների, բնակարանների և սենյակների վերաբեր-
մամբ նաև վարձակալության վորոշ ժամանակամի-
ջոցը .

գ) հատուկ մանյովրային Փոնդի («ե» կետ) տների
վերաբերմամբ արդյունաբերության և տրանսպորտի
ձեռնարկություններին, նմանապես և տեղական խոր-
հություններին պետք է իրավունք վերապահվի իրենց
կողմէից անմիջականորեն շահագործվող տներում ըլ-
ունակելի տարածությունը աղատելու բոլոր կատեգոր-
իաների վարձողներից բնակարանի վարձակալության
պայմանագրում («ը» կ.) հիշատակված ժամանակա-
միջոցն անցնելուց հետո .

դ) արդյունաբերության և փոխագրության ձեռ-
նարկություններին պետք է իրավունք վերապահվի ձեռ-
նարկության տերիտորիայի վրա գտնվող բնակելի շնոր-
քերը վարչական կարգով լիովին աղատելու այն ան-
ձերից, վորոնք չեն աշխատում ավյալ ձեռնարկու-
թյան մեջ .

ե) տեղական խորհուրդները քաղաքայնացման
յենթարկված և իրենց նոր շինած տների մի մասից
պետք է ստեղծեն հատուկ մանյովրային Փոնդ, և այդ

Փոնդի մեջ մանող աների կառավարչությունը կարող է կազմակերպվել տնային տրեստների ձևով.

զ) բնակարանա-վարձակալական կոռուպերատիվ ընկերությունների աներում ազատվող բնակարաններն ու սենյակները պետք է տրվեն բնակարանի կարիք զգացող արդյունաբերության և տրանսպորտի բանվորներին ու ծառայողներին, վորոնք տվյալ ընկերությունների անդամ չեն հանդիսանում, այն պարմանով, յեթե անդամները բավարարված են տվյալ քաղաքի համար դրյություն ունեցող միջին իրական նորմայից վոչ պակաս չափով բնակելի տարածությամբ.

ը) աշխատավորներին պետք է իրավունք տրվի փոխանակելու բնակարանները միևնույն քաղաքի և քաղաքամերձ շրջանների առհմաններում, իսկ այն դեպքերում, յերբ անհրաժեշտ լինի այդ փոխանակությունը կատարել պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատակիցներին մի աշխատանքից մի ուրիշ աշխատանքի տեղափոխելու հետեւանքով, —նաև տարրեր քաղաքներում։ արդյունաբերության և արանսպորտի ձեռնարկություններին պատկանող բնակելի տարածության վերաբերմամբ փոխանակությունը թույլ ե տրվում միայն ձեռնարկությունների վարչությունների համաձայնությամբ։

թ) քաղաքայնացված տներում ազատված չենքերի մեջ անաշխատ կատեղորիայի պատկանող անձանց ըրնակեցնելը պետք է դադարեցվի։ անաշխատ կատեղորիայի այն անձանց վերաբերմամբ, վորոնց յեկամառչարկի յենթակա յեկամուտը տարեկան 3,000 ոռոր. առելի յե, չինություններ վարձելու ժամանակամիջոցը

1929թ. Հոկտեմբերի 1-ից հետո չի կարող յերկարաց- գել.

ժ) բնակարանա-վարձակալական կոռուպերատիվների աների վարձակալության ժամանակամիջոցը կարող է յերկարացվել մինչև 24 տարի այն դեպքում, յեթե վարձած, տան հիմնական նորոգության համար անհրաժեշտ և ծախսել տան արժեքի 15%-ից վոչ պակաս։

շ) պետք է կատարվի տնային յելքի բյուջեյի կայուն նորմավորում՝ բնակարանների շահագործման և ամորտիվացիոն ծախքերի չափերը ճշտելու և անարդյունավետ ծախքերի լիկվիդացիայի հիմունքով։

ը) պետք է միջոցներ ձեռք առնվեն սակավազոր բնակարանա-վարձակալական կոռուպերատիվները խոչը- րացնելու ուղղությունը՝ տների շահագործման ծախ- քերը իջնելու նպատակով։

IV ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԸ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱ- ՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՉ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

17. Բնակարանային շինարարության տեմպը ա- րագացնելու և բնակելի տարածությունն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ համարել գարզացնել համա- քաղաքացիական կոռուպերացիայի գործունեությունը և գրավել մասնավոր խոշոր կապիտալը։ Մասնավորապես, ի հաշիվ մասնավոր կապիտալի կատարվող՝ բնակելի մեծ աների կառուցումը խրախուսելու համար անհրաժեշտ համարել հատոււկ արտոնություններ սահմանել ԽՍՀ Բիության ժաղարգական կոմիսարների նորհրդի առանձին վորոշման հիման վրա։

V ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

18. Կենտրոնացնել կոմունալ Տնտեսության և Քնակարանային Շինարարության կենտրոնական բանկում, նրա ճյուղերում և տեղական քաղաքային ու կոմունալ բանկերում բնակարանային շինարարության Փինանսավորման համար առաջվոր այն միջոցների հավաքումն ու հաշվառումը, վորոնք տրվում են 1927թ. հունիսի 15-ի՝ բնակուրական բնակարանների շինարարությանն աջակցելու միջոցների վերաբերյալ կառունագրության կարգով (ԽՍՀ Միության Որենք. Ժող. 1927 թ. № 36, Հոդ. 369) և վորպես արանսպորտի ու արդյունաբերության բյուջեյից կատարվող վերաբերձման յենթակա գրամական հատկացումներ :

19. Պարտադիր համարել, վորպեսով բնակարանային կոռպերացիան իր սեփական միջոցները պահի ընթացիկ հաշվով քաղաքային և կոմունալ բանկերի մեջ, իպէ վորտեղ վերջինները չկան—ԽՍՀ Միության Պետական բանկի բաժանմունքներում և պետական աշխատավորական խնայողական գրամարկղներում :

20. ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի և Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի վրա դնել բնակարանային շինարարությանը հատկացված բոլոր միջոցների հաշվառումը առանց քացառության :

21. Պարտավորեցնել ԽՍՀ Միության Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատին և դաշնակից հանրա-

պետությունների Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատներին իրագործել կառավարության քաղաքականությունը բանկուրական բնակարանների շինարարության բնագավառում՝ գոյություն ունեցող որենքների համեմատ, նմանապես և հսկել բանկուրական բնակարանային՝ շինարարության պլանի իրագործման վրա, կազմակերպել փորձնական շինարարություն և հսկել նրա իրագործման վրա, համապատասխան ձեռվ բաշխելով այդ նպատակի համար հատկացվող միջոցները :

22. Առաջարկել դաշնակից հարապետությունների կառավարություններին յերկու ամիս ժամանակամիջոցում լիկվիդացիայի յենթարկել բանկուրական բնակարանային շինարարությունը աջակցող հանրապետական և տեղական կոմիտեները :

VI ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

23. Բնակարանային ամրող գործը կարգավորելու նպատակով անհրաժեշտ համարել դաշնակից հանրապետությունների կառավարությունների կողմից բնակարանային որենսդրքեր հրատարակելը :

24. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կառավարություններին մատցնել դաշնակից հանրապետությունների որենսդրության մեջ այս վորոշումից բղխող փոփոխությունները :

25. Հանձնարարել ԽՍՀ Միության Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատին յերկու ամիս ժամանակամիջոցում ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը մատցնել ԽՍՀ Միության գործող ու

բենադրության՝ այս վորոշումից ըղիսող փոփոխությունների նախագծերը:

ԽՍՀ Միության կԳԿ Նախագահ՝ Ա. ԿՈՂՋԻՆԻՆ

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահ՝ [REDACTED]

ԽՍՀ Միության կԳԿ Քարտուղար՝ [REDACTED]

Մոսկվա—Կրեմլ.

1928 թ. հունվարի 4.

«Հպիկատիա» 1928 թ. հունվարի 19, № 16-

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃԻ

ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության կենարոնական գործադիր կոմիտեյի և ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1928 թ. հունվարի 4-ի՝ բնակարանային քաղաքականության վերաբերյալ վորոշման 17 հոդ. հիման վրա (ԽՍՀՄ Որ. և Կ. Ժող. 1928 թ. № 6, հոդ. 49) ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում է.

1. Մասնավոր կապիտալի հաշվով՝ դաշնակից հանրապետությունների որենազրությումբ սահմանված նվազագույն չափերով կատարվող խոշոր տների շինարարությունը խրախուսելու նպատակով այդ շինարարությունն իրագործող՝ ԽՍՀ Միության քաղաքացիներին և մասնավոր անձանց վերապահել հետեւյալ հողվածներում (2—18) մատնանշված արտօնությունները —

2. Դյուրացնել առանց պետական և կոռպերատիվ կապիտալի մասնակցության բաժնետիրական ընկերություններ կազմակերպելը, վորոշնք նպատակ են գրեթում 1 հոդ. հիշված տների կառուցումն ու շահագոր-

ծումը, վորի համար—ա) սահմանել, վոր հիշյալ ընկերություններ հիմնելու թույլտվությունը տալիս և ԽՍՀ Միության ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդության գործունեության վրա այն գեպքերում, յերբ նրանց գործունեության շրջանը դարձ է զալիս մի դաշնակից հանրապետության սահմաններից, միաժամանակ սահմանված կարգով հաստատելով նրանց կանոնադրությունները, բ) սուսանագիր դաշնակից հանրապետությունների կառավարություններին այս հրահանգի «ա» կետի նկատմամբ սահմանել ընկերությունները հիմնելու և նրանց կանոնադրությունները հաստատելու դարձեցված կարգ այն գեպքերում, յերբ նրանց գործունեության շրջանը դուրս է գալիս մի դաշնակից հանրապետության սահմաններից :

3. Թույլ տալ հիմնել մասնավոր շինարարական դրասենյակներ, վորոնց նպատակն է 1 հոդ. նախատեսված աների կառուցման կապալների կատարումը, չսահմանափակելով վարձու բանվորների թիվը :

Հիշյալ շինարարական գրասենյակներին իրավունք վերապահել իրենց հաշվով կառուցելու 1 հոդ. նախատեսնված տներ չահագործման նպատակով :

4. Թույլ տալ հիմնել և չահագործել մասնավոր արդյունաբերական ձեռնարկություններ՝ շինարարական նյութերի առանձին տեսակներ արտադրելու համար, չսահմանափակելով վարձու բանվորների թիվը :

Այն շինարարական նյութերի ցուցակը, վորոնց արտադրության համար կարող են հիմնվել վերոհիշյալ ձեռնարկությունները, սահմանում և ԽՍՀ Միության ժողովրդական Տնտեսության Գերագույն Խոր-

հուրդը, համաձայնեցնելով ԽՍՀ Միության Արտաքին և ներքին Առևտության ժողովրդական կոմիսարիատի հետ:

5. 3 և 4 հոդվածներով նախատեսված ձեռնարկությունները յենթակա յեն հատուկ սոմարագրության այն կարգով, վոր սահմանում և ԽՍՀ Միության ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդություն, համաձայնեցնելով ԽՍՀ Միության Արտաքին և ներքին Առևտության ժողովրդական կոմիսարիատի հետ:

6. Թույլ տալ հիմնել շինարարական փոխադարձ վարկի մասնավոր ընկերություններ, վորոնց դուրձունեության նպատակն է Փինանսավորել մասնավոր անձանց (իրավական և Փիզիքական) միջոցով կառուցվող 1 հոդ. նախատեսված տների շինարարությունը:

Հանձնարարել ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատին մի ամիս ժամանակամիջոցում ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդության մատցնել՝ հիշյալ ընկերությունների կազմակերպության կարգը և ձեր սահմանող վորոշման նախագիծ :

7. 1-ին հոդ. նախատեսված տների համար հատկացվող հողագույնական վերաբերյալ կառուցման պայմանագրերի ամենայերկար ժամանակամիջոցը սահմանվում է 80 տարի քարի, յերկաթերետոնե ու խոռը տների համար և 60 տարի—փայտե տների համար :

8. 1 հոդ. նախատեսված տների համար հատկացվող հողագույնական վերաբերյալ կառուցման իրավունքը կարող է ուտարվել և զրավ դրվել առանց հատուկ թույլտվության այն գեպքերում, յերբ կառուցողը կատարել է պայմա-

Նազրով սահմանված կառուցման ծավալի առնվազն 30%-ը, և կառուցման հողամասը հատկացնող մարմնելթույլությամբ—մնացած գեղքերում։ Սակայն հիշյալ թույլովությունը չի պահանջվում այն գեղքերում, յերբ կառուցման իրավունքը գրամ և դրվում վարկային հիմնարկներում շինարարական նպատակային փոխառովություն ստանալու համար, կամ յերբ կառուցման իրավունքը հարկադիր կարգով ստարվում և կառուցման իրավունքի գրավաղըությամբ կառուցողին վոխառվություն տված պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների, կոոպերատիվ կազմակերպությունների կամ վարկային հիմնարկների պահանջների հետևանքով, ինչպես նաև հրապարակային աճուրդով կառուցման իրավունքը ձեռք բերած հիշյալ հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից կառուցման իրավունքը հետապում ստարվում գեղքում։

9. 1 Հոդ. Նախատեսված տների շինարարությունը պետք և կատարվի տեխնիկական-կառուցողական և սանիտարական-առողջապահական այն նորմաներէ համաձայն, վորոնք սահմանվում են դաշնակից հանրապետությունների որևէնողությամբ։

10. 1 Հոդ. Նախատեսված տներում ընդհանուր տարածության մի քառորդից չկերազանցող մասը կարող և հատկացվել առևտրական, պահեստային և վոչ-բնակելի այլ չենքերի համար։

11. 1 Հոդ. Նախատեսված՝ մասնավոր անձանց (իրավական և Փիզիկական) կողմից կառուցված տները կարող են չահագործվել ամրողությամբ կամ մասամբ

վարձով տալու միջոցով, ինչպես նաև առանձին բնակարաններ, սենյակներ, առևտրական, պահեստային և այլ չենքեր տնատերերի ու վարձողների փոխառությամածայնությամբ սահմանվող պայմաններով վարձով տալու միջոցով, առանց վարձագինը վորեն նորմայով կամ սակացույցով սահմանափակելու։

Այս գեղքում առանձին բնակարանները, սենյակները և վոչ բնակելի չենքերը կարող են վարձով տրվել առեն մի ժամանակամիջոցով կառուցման պայմանագրի ժամանակամիջոցի սահմաններում, և տնատերերը վարձագինն ստանում են վարձողներից թե պարբերական վճարումների, թե չենքը վարձով տալու պահին վարձը միանվագ ստանալու միջոցով, կամ այս և այն յեղանակով միաժամանակ։

Հիշյալ տների բնակարանները վարձով տալու վերաբերյալ պայմանագրերի վրա չի տարածվում վարձողների առանձին կատեգորիաների համար ընդհանուր որենսդրությամբ նախառեսված այն կարգը, վորի համաձայն պայմանագրերը ինքնարերաբար նորոգվում են առանց վարձատուի համաձայնության։

12. 1 Հոդ. Նախատեսված տներում ապրող անձանց բոնած բնակելի տարածությունը չի սահմանափակվում վորեն նորմայով, սակայն հիշյալ տներում ապրող յուրաքանչյուր անձին ընկնող բնակելի տարածությունը համապատասխան դաշնակից հանրապետության որենսդրության կարգով սահմանված սանիտարական նորմայից պակաս չպետք և լինի։

13. 1 Հոդ. Նախատեսված տների բնակելի չենքերում մարդ բնակեցնելը և վոչ բնակելի չենքերը բոնելը

չի կարող տեղի ունենալ վորհե վարչական մարմնի
կարգադրությամբ :

Վարձողներին նրանց բոնած շենքերից հանելը թույլ
է արվում միայն դատական կարգով :

14. 1 Հոդ . Նախատեսված տների շինարարությունն
իրականացնող մասնավոր (իրավական և Փիզիկական)՝
անձինք պատվում են այդ տների շահագործությունից
ստացված յեկամտից հասանելի յեկամտահարկից և այդ
տների վրա բնկնող՝ շենքերի տեղական հարկից, ինչ-
պես նաև կառուցման համար նրանց հատկացված հո-
գամաների ռենտայից այդ տները կառուցելոց հետո
յերեք տարվա ընթացքում լրիվ չափով, իսկ կառուց-
ման պայմանագրի տեսողության մնացած ժամանակա-
միջոցում—կիսով չափ : Բացի դրանից Փիզիկական ան-
ձինք պատվում են նրանց և նրանց միջացներով ապ-
րող՝ ընտանիքի անդամների բոնած բնակելի տարա-
ծության համար հասանելի բանվորական բնակարանե-
րի շինարարության համար սահմանված բնակարանային
հարկից :

15. 3 Հոդ . Հիշված շինարարական գրասենյակները
իրենց միջոցով կատարվող կատալային գործարքների
համար հարկ վճարելու հարցում հավասարեցվում են
պետական շինարարական գրասենյակներին :

16. 4 Հոդ . Հիշված արդյունաբերական մասնավոր
ձեռնարկությունները հարկեր վճարելու հարցում հա-
վասարեցվում են գոյություն ունեցող պետական ար-
դյունաբերական ձեռնարկություններին :

17. 6 Հոդ . Հիշված շինարարական փոխադարձ վար-
կի ընկերություններին արվում են հարկային արտօնու-

թյուններ, համաձայն նրանց կազմակերպության կար-
գրն ու ձեր սահմանող հատուկ վորոշման :

18. Այս վորոշմամբ նախատեսված տների համար
հատկացված բոլոր հողամասերի կառուցման իրավուն-
քը, 2 հոդ . մատանշված բաժնետիրական ընկերություն-
ների բաժնետոմսերը կամ 6 հոդ . մատանշված փո-
խադարձ վարկի ընկերությունների փայերը ժառանգու-
թյան կարգով փոխանցվելու դեպքում ազատվում են
ժառանգության կամ նվիրման կարգով փոխանցվող
դույքի համար սահմանված հարկից :

19. Այս վորոշումով նախատեսված բոլոր արտօնու-
թյունները կարող են վերապահվել ոտարերկրյա քա-
ղաքացիներին և իրավական անձանց կողեսսխոն պայ-
մանագրերով :

20. Առաջարկել գաշնակից հանրապետությունների
կառավարություններին մտցնել գաշնակից հանրապե-
տությունների որենագրության մեջ այս վորոշումից
բղիսով փոփոխությունները :

21. Հանձնարարել ԽՍՀ Միության ֆինանսների
ֆողովադական կոմիսարիատին մի ամիս ժամանակամի-
ջոցում ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների
Խորհուրդ մտցնել ԽՍՀ Միության որենագրության այն
փոփոխությունները, վորոնք բոլորում են այս վորո-
շումից :

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների
Խորհրդի Նախագահի Տեղակալ՝ ՅԱ. ՌՈՒԶՈՒՏՅԱՆ
ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների
Խորհրդի Գործերի Կառավարի՝ Ն. ԳԱՐԵՍՈՒՆՅԱՎ.
Մոսկվա, Կրեմլ, 1928 թ. ապրիլի 17-ին .

**ՄԱՍՆԱՎՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՈՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

(Որենքների մատչելի պարզաբանություն)

Բնակարանային շինարարության հարցը այն սոցիալական խնդիրներից է, վորոնք նորհրդային իշխանության առանձին ուշագրության առարկա յեն հանդիսացել: Յեվ այդ հասկանալի յեւ բնակարանային շնարարության հարցը սերտ կերպով կատված է ժողովրդական տնտեսության ընդհանուր խնդրի հետ: Զարգացնել բնակարանային շինարարությունը յերկրում, ապահովել բնակչությանը բավարար բնակելի տարածությամբ, վորակեսզի ամեն մի քաղաքացի, մասնավորապես աշխատավորը, հնարավորություն ունենաապրելու և աշխատելու նպաստավոր բնակարանային պայմաններում, —այդ միենույն ե թե լուծել դրական իմաստով ժողովրդական տնտեսության վերաբերյալ խնդիրներից մեկը:

Մինչդեռ բնակարանային շինարարության հարցը ամբողջ միության մեջ, մասնավորապես մեղ մոտ, Հայաստանում, չնորհիվ մի շարք որեւեկամիվ պատճառների, կրում ե սուր բնույթ: Իմպերիալիստական պատերազմը սկսվելուց հետո բնակարանային շինարարությունը միանգամայն կանգ է առնում: Քաղաքների բնակելի տարածության մեծ մասը պատերազմի շրջանում, ինչպես և նրանից հետո, իսպառ չի նորոգվում

և ժամանակի աղղեցության տակ բնական ընթացքով քայլաբլում է և այդպիսով անպետք է դառնում ապրելու համար:

Մինչդեռ քաղաքների բնակչությունը շարունակում է աճել, իսկ դոյսությունը ունեցող բնակելի տարածությունը չի բավարարում բնակարանային կարիքը:

ՀՍԽՀ Պետության կողմից 1926—1931 թ. համար կազմված բնակարանային շինարարության հետանկարային պլանից յերկում և, վոր Հայաստանի վեց քաղաքներում՝ Յերևանում, Վաղարշապատում, Ղարաբղիսայում, Դիլիջանում, Նոր Բայազեղում և Գորիսում միջին հաշվով մի չնչին ընկնում և 2,73 քառ. մետր բնակելի տարածություն (տես «Լենինյան Ուղի» ամսագիրը 1928 թ. № 1-2): բնակարանային այդ ձգնաժամը մեղմացնելու նպատակով անհրաժեշտ և ուժեղացնել բնակարանային շինարարության թափը և այդպիսով ավելացնել բնակելի տարածությունը, նաև նորոգել և ողահպանել քաղաքներում գոյություն ունեցող բնակելի տարածությունը:

ՀՍԽՀ Խորհրդային իշխանությունը հեղափոխության առաջին իսկ որերից բնակարանային շինարարության հարցը դարձնում է իր կարևորագույն նպատակներից մեկը:

Մի շաբթ որենսդրական ակտերով ՀՍԽՀ Խորհրդային իշխանությունը կարգավորում է բնակարանային շինարարության և բնակարանային վարձի վերաբերյալ հարցերը: Որենսդրական ակտերի գլխավոր նպատակն է մի կողմից՝ զարգացնել յերկրում բնակարանային շնորհարությունը ինչպես պետական, նույնական և տե-

դական միջոցներով, մյուս կողմից՝ տնտեսական ինքնուրույնություն տալ տնատերերին վերանորոգելու և վերականգնելու իրենց տները։ Միաժամանակ Խորհրդային Խշանությունը բնակարանային շինարարության գործում ասպարեզ ե քաջում մասնավոր կապիտալը և մի շարք արտոնություններ ե տալիս այն քաղաքացիններին ու մասնավոր ընկերություններին, վորոնք նոր չենքեր են կառուցում կամ հիմնավորաբես վերաշնում են իրենց տները։ Այս րուրունակատառումները կազմում են Խորհրդային Խշանության բնակարանային քաղաքականության հիմքը։

Այս գրքույյի նպատակն է՝ պարզաբանել խորհրդային իշխանության այն որենտրական ակտերը—դեկրետները, վորոշումները, վորոնք վերաբերում են մասնավոր բնակարանային շինարարության և տների վերականգման հարցերին, և ընդդեմ առանձին քաղաքացիների ու մասնավոր ընկերությունների արտոնությունները բնակարանային շինարարության գործում։

1. ՏՆԱՏԵՐԵՐԸ ՅԵՎ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.

Դեռ 1921 թ. Հոկտեմբերի 12-ին ՀՍԽՀ ժողովը դական կոմիսարների Խորհուրդը բնակարանային շինարարությունը վերականգնելու և տնատերերին տնտեսական ինքնուրույնություն վերապահելու նպատակով, «Քաղաքային անշարժ գույքերի մասին» դեկրետի մեջ պարզ և վարոշակի կերպով շեշտում ե, վոր այն տներն ու շենքերը, վորոնք յենթարկված չեն քաղաքայնացման (մոնիթուրալիզացիայի), մնում են իրենց սեփականատերերի լիակատար տնորինության տակ։ Նույն դեկրետում ընդդեմ շենքած կամ հիմքա-

վորապես վերաշինված տները միանգամայն ազատ են բոնագրավումից և վոչ մի գեղագում քաղաքայնացման յենթարկել չեն կարող (Դեկր. և Վորոշ. Հավաք. 1921 թ. № 10, հոդ. 62)։ տնատերի հիշյալ արտօնությունները շեշտված են նաև ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1923 թ. սեպտեմբերի 18-ի դեկրետի մեջ, վորակեղ ասված ե, վոր նոր կառուցված ու հիմնական վերանորոգության միջոցով վերականգնված բալոր բնակարանները և խանութներ ունեցող տները տպատվում են ազգայնացումից, քաղաքայնացումից, այլ և հարկադիր սակագնով վարձու տալուց ու թողնըլում են իրենց տերերի լիակատար տնորինության տակ (Դեկր. և Վորոշ. Հավ. 1923 թ. № 7, հոդ. 51)։ Վերականգնած տներ ասելով պետք է հասկանալ այն տները, վորոնք մինչև նորոգվելը չեն ողտագործվել մաշված, խարիսուլ լինելու պատճառով, և վորոնց վերականգնումով ավելանում ե քաղաքի բնակելի տարածությունը։

Տալով տնատերերին այդպիսի արտօնություններ, որենքը միևնույն ժամանակ պարտավորեցնում է խարիսուլ ու անքնակ տների տերերին միջոցներ ձեռք տնել իրենց տները վերականգնելու։ Հակառակ պարագային նրանց անելը որենքով սահմանված կարգով կարող են հանվել նրանց ոգտագործությունից և հանձնվել գաղղորդկոմներին։ Այսուղ հարկավոր և պարզել, թե ի՞նչ և նշանակում տների վերականգնումը։

Տների վերականգնումը—այդ տների վերաշինությունն է, հիմնական նորոգություն կատարելն է։

Տների վերաշինությունը—հիմնական նորոգու-

թյուն կատարելը՝ ըստ գործող որենսդրության տնա-
տերերի անժիջական, ուղղակի պարտականությունն է :
Հիմնական նորոգություն առելով պետք է հասկանալ
այն աշխատանքները, զորոնք կատարվում են չենքի
հիմնական տարրերը կամ մասները վերականգնելու նը-
պատակով այն դեպքերում, յերբ տունը բնական ըն-
թացքով խարխուլ է գտանում, կամ նրա այս կամ այն
մասը քայլքայլում է տնատերոջ կողմից իր ժամանակին
անհրաժեշտ նորոգություններ չկատարելու հետևան-
քով :

Գոյություն ունեցող բնակելի ֆոնդի պահպանումը
—բնակարանային շինարարության հիմնական խնդիր-
ներից մեկն է : Ամեն մի տնատեր պարտավոր է պահ-
պանել իր տան բնակելի ֆոնդը : Նոր բնակարանային
դեկրետով (1928 թ. մարտի 10-ի) բնակարանային վար-
ձր սոհմանված է այնպիսի չափերով, վորպեսզի տնա-
տերը հնարավորություն ունենա ծածկելու տնային
տնտեսության ծախսերը : Տնային տնտեսության ծախ-
սեր առելով պետք է հասկանալ տնային տնտեսության
իրական ծախսերը, այն և՝ պահպանությունը, նորո-
գությունը և ամորտիզացիոն ծախսերը—այսինքն՝ քայ-
լքայլած տների փոխարեն նորերը կառուցելու անհրա-
ժեշտ միջոցների կուտակումը : Բնակարանային նոր ո-
րենքը հնարավորություն և տալիս տնատերերին, ժա-
մանակին ստանալով բնակարանային վարձը, կատարել
անհրաժեշտ նորոգությունը և այսպիսով պահպանել
տների բնակելի տարածությունը :

Բնակարանային վերաշնուրության գործի ասպարե-
զում վարկ ստանալը երտին հարցերից մեկն է և չե-

նարարության թափը վորոշ չափով կախված է այդ
հանգամանքից : ՀԱԽՀ Կոմունալ բանկի նպատակներից
մեկն է՝ վարկ տալ նաև քաղաքացիներին բնակելի տա-
րածությունը վերականգնելու և ընդարձակելու համար
(Կոմ. Բանկի հանոնադրության 1-ին հոդ. «ա» կետը) :
Նոր չենքեր կառուցողները, տնատերերը և այլ անձինք,
յեթե ակտիվ կերպով հայտնաբերեն իրենց նախաձեռ-
նությունը շինարարական գործի ասպարեզում, հնարա-
վորություն ունեն անհրաժեշտ գումար ստանալու վար-
կային հիմնարկություններից :

Վարկային հիմնարկությունները միշտ ոչակցու-
թյուն են ցույց տալիս նոր չենքեր կառուցող քաղաքա-
ցիներին : Հարկավոր է միայն, վոր վերջինները իրենց
շինարարական նախաձեռնությունը իրականացնեն կրան-
քում :

Բացի սրանից Միութենական կենտրոնական գործությունիցի 1928 թ. վերաբարի 8-ի վորոշմամբ՝
բնակարանային շինարարությունը զարգացնելու նպա-
տակով իրավունք է վերապահվում չենքերի սեփակա-
նատերերին, կառուցողներին և այլ անձանց կազմակեր-
պելու փոխադարձ վարկի բնկերություններ, վորոնց
նպատակն պիտի լինի աջակցություն ցույց տալ իրենց
անդամներին՝ նրանց կարճատե վարկ հատկացնելով
(ԿՍՀՄ Որենք. Փող. 1928 թ. № 11, Հոդ. Հոդ. 93 և
94) : Որենքի մեջ մանրամասնորեն մատնանշված են այդ
բնկերությունների կառուցման հիմունքները, նրանց
կողմից կատարվող գործարքները, անդամների իրա-
վունքներն ու պարտականությունները և այլն : Պետա-
կան ձեռնարկությունները, կոռպերատիվ և հասարա-
կական կազմակերպությունները ըստ հիշյալ որենքի

չեն կարող փոխադարձ վարկի բնկերության անդամ լինել:

11. ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Բնակարանային շինարարությանը զարկ տալու և քաղաքների բնակելի տարածությունը ավելացնելու նպասակով որենքը սահմանել է նոր չենքեր կառուցանելու համար առանձին կարգ, վորը իրավաբանական լեզվով կոչվում է «կառուցման իրավունք» (Քաղ. Որենս. Հոդ. Հոդ. 71—84): Համաձայն այդ որենքի պետական հիմնարկությունները, ձեռնարկությունները, պրոֆեսիոնալ և կոոպերատիվ կազմակերպությունները և այլ նման անձինք, ինչպես և մասնավոր քաղաքությունները վայելում են մի շարք արտօնություններ շինարարության գործի ասպարեզում: Նկատի առնելով «կառուցման իրավունքի» սոցիալ-տնտեսական մեծ նշանակությունը, անհրաժեշտ է այստեղ կանգ առնել այդ «կառուցման իրավունքի» վրա, պարզել նրա երևթյունը և մասնավորապես ընդգծել այն իրավունքներն ու արտօնությունները, վորոնք վերապահված են առանձին քաղաքացիներին շինարարության գործի ասպարեզում:

Համաձայն գործող որենքի ամեն մեկը, լինի այդ պետական-հասարակական հիմնարկություն, ձեռնարկություն, կազմակերպություն կամ թե մասնավոր քաղաքությի, յեթե ցանկանում է նոր չենք կառուցել, կարող ե դիմել քաղխորհրդի կոմունալ բաժնին և միջորդություն հարուցել, վորովեզի նրան հատկացվի հողամաս նոր չենք կառուցելու համար:

Կոմունալ բաժնը, յեթե միջորդությունը գտնում է հարգելի, քաղաքի տնտերինության տակ գտնվող ընակելի հողերից վորոշ հողամաս պայմանագրի հիմունքում

ներով տալիս ե դիմողներին: Պայմանագիրը նոտարական կարգով կնքելու և կոմունալ բաժնումն տոմարագրելու որից կառուցողը ձեռք ե բերում «կառուցման իրավունք», վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ չենք կառուցելու համար նրան տրամադրված հողամասի տիրապետության և ոգտագործության իրավունք: Ի՞նչ իրավունքներ ե վայելում կառուցողը ըստ պայմանագրի, վոր կնքում ե կոմունալ բաժնի և նրա միջև:

1. Նախ և առաջ պայմանագրի եյտկան կետը—այդ ժամանակամիջոցն է (ըրու). վորքան պայմանագիրը յերկար ժամանակով ե կնքում, այնքան կառուցողը հնարավորություն ե ունենում լրիվ կերպով իրականացնելու իր կառուցման իրավունքը, որինակ, շինարարության համար վարկային հիմնարկություններից յերկարատև վարկ ստունալ և հետզհետե շիջուցանել, դրավ դնել կառուցման իրավունքը ավելի յերկար ժամանակով և այլն. Հենց այս տեսակիտից որենքը, կամ ենալով բնակարանային շինարարության ամուռ հիմք ստեղծել, ինչպես նաև կառուցման իրավունքի հիման վրա կառուցված չենքերի տիրապետության տեղությունը և անխախտելիությունը ապահովել, յերկարացրել և պայմանագրերի ժամանակամիջոցը: Յեթե սկըրում, յերբ Քաղ. Որենսգիրքը գեռ նոր եր կիրարկության դրված (1923 թ. ապրիլի 10-ը), կոմունալ բաժնները կնքում եյին պայմանագրեր քարե չենքեր կառուցելու համար—մինչև 49, իսկ մնացած չենքերի համար—մինչև 20 տարի ժամանակով, ապա հետապայում որենքը վերահեշտակ նկատառումներով յերկարացրում ե պայմանագրերի ժամանակամիջոցը քարաշեննե-

րի համար մինչեւ 60, իսկ մնացած շենքերի համար մինչեւ 40 տարի ժամանակով :

Մեր կառավարությունը, նպատակ ունենալով կառուցողների իրավունքը ավելի ևս ապահովել, 1928թ. մարտի 28-ին Հրատարակել է նոր որենք, վորի համաձայն կոմունալ բաժնները պայմանագրերը կնքում են կառուցողների հետ հետեւյալ ժամանակամիջոցներով. քարե (աղյուսե) և յերկաթյարենոնե շենքերի համար մինչեւ 65 տարի, խառը շենքերի համար—մինչեւ 60 տարի և փայտե շենքերի համար մինչեւ 50 տարի (Խ. Հ. 1928 թ. ապրիլ 28-ի № 100): Այդ որենքով վերացվում են կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրերի այն ժամանակամիջոցները, վորոնք սահմանված են նախկին վորոշումներով:

3. Յերկրորդ եյական հարցը, վոր կապված է կառուցման իրավունքի հետ, այդ այն և, թե արդյո՞ք կառուցողը ինչ իրավունքներ և ձեռք բերում, յերբ նա պայմանագրով նախատեսված ժամանակամիջոցում իրեն հառկացված հողամասում շենք և կառուցում համաձայն զոյություն ունեցող տեխնիկական-շինարարական կանոնների: Նախ և առաջ նա անմիջապես ողագործում է կառուցվածքը: Կառուցված շենքի ամրող բնակելի տարածությունը գտնվում է կառուցողի անմիջական տրամադրության տակ, և շենքի բնակելի տարածության 1/3 մասը չի հառկացվում կոմունալ ֆոնդին, ինչպես այս որենքով սահմանված և քաղաքների և գավառակային կենտրոնների բոլոր տների համար իրաց առյալ 2-3 սենյակ ունեցող տները:

Բացի սրանից կառուցօղի շենքի վրա չի տարածվում բնակարանային որենքը: Այդ նշանակում է հե-

տելալը.—յեթե բնակարանային որենքով սահմանված բնակարանային վարձի կոպարները պարտադիր են բուլոր տնատերերի համար, յերբ նրանք վարձով բնակարաններ, սենյակներ են տապիս, ապա նոր շենքեր կառուցողների համար որենքը բացառություն և անում: Երանց իրավունք և վերապահում փոխադարձ համաձայնության գալով վարձողների հետ, վարձով տալ սենյակներ, բնակարաններ, նույնիսկ ամբողջ շենքը անկախ գոյություն ունեցող բնակարանային վարձի սակագնեց:

Կառուցման իրավունքի ոգտագործման այս յեղանակը պետք է համարել անտեսավես նպատակահարմար, քանի վոր քաղաքացիների բնակարանային կարիքը այսպիսով ժամանակի կերպով բարգարարից:

3. Կառուցման իրավունքի յերրորդ եյական կետն այն է, վոր կառուցման իրավունքը կարելի յետուած կառուցողի անվիճակի իրավունքն է, և կոմունալ բաժնը չի կարող կառուցողի իրավունքը սահմանափակել պարանակը ուղղում պարզ և վորոշակի կերպով այս հանգամանքները շեշտափած են: Յեթե յենթագրենք, վոր կառուցողը այս կամ այն պատճառով չի ցանկանում այլիս ողագործել հողամասը և այն շենքը, վոր կառուցել և հողամասի վրա, ապա նա կարող է իր կառուցման իրավունքը ստարել, այսինքն՝ վաճառել Յ-ՐԴ անձի: Վործնականապես, յեթե կառուցման իրավունքը ստարումը տեղի յետուած, ապա այդ զործարքը առուծախան բնույթի և կրում, կառարփում և նոտարական կարգով և տօմարագրվում ե կոմունալ բաժնում:

Ոտարման կարգով կառուցման իրավունքը ձեռքբե-

բողին անցնում , փոխանցվում են այն բոլոր պարտակառությունները , վորոնք նախատեսված են կոմունալ բաժնի և կառուցողի միջև կնքված պարմանագրով : Կառուցման իրավունքը , ինչպես հիշեցինք վերևում , կարելի յէ նույնպես գրավ դնել : Այդ իրավունքը նույնպես Եյական իրավունք է կառուցողի համար : Յեթե յենթադրենք , վոր կառուցողը ցանկանում է այդի տրնկել կամ բռնտան ցանել հողամասի վրա , սակայն նյութական միջոց չունի այդ անելու , ապա նա կարող է իր կառուցման իրավունքը գրավ դնել մասնավոր ժարդումուն կամ վարկային հիմնարկությունում և ստանալ դրամ (փոխառվություն) : Ի հարկե ժամանակին կառուցողը պիտի վճարի իր այդ պարտքը . հակառակ պարագային այն անձը կամ ձեռնարկությունը (գրավուն) , վոր նրան դրամ և տվել , կարող է դատական կարգով սահմանչել տված գումարը : Յեթե կառուցողը դատարանի վճնից հետո կամավոր կերպով չվճարի իր որպարքը , այդ դեպքում գրավառուն կարող է բավարարություն ստանալ՝ կառուցման իրավունքը աճուրդով վաճառել տալով :

Ընդգծենք նույնպես , վոր կառուցման իրավունքը գրավ դնելու կարգը նույնն է , ինչ վոր օտարման դեպքում , այսինքն՝ գործարքը կատարվում է նոտարական կարգով այն ժամանակամիջոցի սահմաններում , վոր նախատեսված և հիմնական կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրով : Գրավի գործարքը նույնպես տոմարագրվում է կոմունալ բաժնում :

4. Անհրաժեշտ և ընդգծել և այն , վոր կառուցման իրավունքը նաև ժամանգառական իրավունք է . այդ նշանակում և համարյալ . յեթե կառուցողը վարձանագրում է

մինչև կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրով նախառառեսված ժամանակամիջոցը լրացնալը , ապա կառուցման իրավունքը անցնում է նրա իրավահաջորդութիւններին (զավակներ , թուներ , ծոռներ , կենդանի մնացած ամուսիններ) : Իրավահաջորդները ոգտագում են այն բոլոր իրավունքներից ու արտանություններից , չորրը վայելում եր կառուցողը :

Ահա այն եյական արտօնությունները , վորոնք վերապահված են կառուցողներին՝ համաձայն գործող որևէնսղբության :

Որենքը , կառուցողների համար սահմանելով արտօնություններ , միաժամանակ դնում և նրանց վրա միշտաք պարտականություններ չենարարական գործի ասպարեզում : Որինակ՝ չենքեր կառուցելիս , ինչպես և նրանց ոգտագործման ընթացքում , կառուցողը պարտավոր և պահպանել սահմանված շինարարական նորմաները , նաև սանիտարական և հակահրդեհային նախագուշական կանոնները , հրդեհից ասպահովագրել չենքերը , կատարել չենքերի հիմնական և ընթացիկ նորոգությունը , ժամանակամիջությունը ժամանակամիջությունը և այլն . կառուցողի պարտականությունները առհասարակ ժամանակամիջություններ կառուցման իրավունքի վերաբերյալ պարմանագրում , և որենքով նախառառեսված և , թե ինչ գեպերում կոմունալ բաժնը կարող է դատական կարգով քանդել պարմանագրիրը , յեթե կառուցողը չի կատարում իր պարտականությունը , (որինակ յեթե կառուցողը սահմանված ժամանակամիջոցում չի սկսել կառուցել չենքեր և այլն) :

Անհրաժեշտ և ընդգծել և այն վարկային արտօնությունները , պարոնք վերապահվոծ են կառուցողներին :

Համաձայն գործող որենսդրության կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրի հիման վրա կառուցված բնակելի շենքերը իրենց հողամասերով ազատվում են պետական և տեղական հարկերից ու տուրքերից շենքը կառուցելուց հետո յերեք տարվա ընթացքում։

Այդ ժամանակը լրանալուց հետո կառուցողները կամ նրանց իրավահաջորդները (ժառանգները) պայմանագրով նախատեսված ժամանակի ընթացքում վճարում են սահմանված հարկերի ու տուրքերի 50%-ը այն սրամանով, յեթե կառուցված շենքերի բնակելի տարածությունը ամրող տարածության 75%-ից պակաս չէ (Քաղ. Որ. Հոդ. 76, ԽՍՀՄ Որ. Ժող. 1927 թ. № 5, Հոդ. 46)։

Յեզ այսպես, որենքը՝ սահմանելով կառուցման իրավունքը, նպատակ է ունեցել բնակարանային շինարարության գործում ասպարեզ քաշել նաև մասնավոր կապիտալը. տարավ կառուցողին մի շարք եյական արտոնություններ, որենքը այսպիսով ապահովել է կառուցման իրավունքի հիման վրա շինված շենքերի տերապետության տեղորությունը և անխիախտելիությունը։

Այսուեղ անհրաժեշտ է լուսաբանել կառուցման իրավունքի հետ կապված նաև մի այլ հարց. համաձայն դործող որենքի (Քաղ. Որ. 182 Հոդ.) վոչ վոք չի կարող մեկից ավելի տուն ձեռք բերել (գնել). որինակ՝ յեթե վորեն քաղաքացի, վորը սեփական տուն ունի, ցանկանում է գնել յերկրորդ տուն, որենքը արգելում է նրան այդ անել։

Հարց և ծագում—կարո՞ղ ե արդյոք կառուցողը, վորը կառուցման իրավունքի հիման վրա տուն և շինել նրան հատկացված հողամասում, գնել նաև ուրիշ տուն։

այդ հարցին հարկավոր է գրական պատասխան տալ հետեւյալ նկատառումով։ Կառուցման իրավունքը ընդունված ողողագործելու իրավունք չե. այդ իրավունքը, ինչպես մենք ընդգծել ենք վերևում, պայմանագրով սահմանվում է մինչև 65, 60 և 50 տարի ժամանակով։ Նայած շենքի ընույթին, այդ ժամանակը լրանալուց հետո կառուցողը իր շենքը հանձնում է կոմունալ բաժնին, վորը կառուցողին վճարում է շենքի այդ պահին ունեցած արժեքը, գուրս գալով այն գումարները, վոր կառուցողը պարտք և կոմունալ բաժնին։ Բանի վոր կառուցման իրավունքը այսպիսի ընույթ ունի, կառուցողը, վորքան թվով ել շենք շինած լինի, մեջտեղ կարող է մեկից վոչ ավելի տուն գնել։ Այդ շատ եյական իրավունք է կառուցողի համար։

III. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ - ՇԻՆԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՂՈՉԵՐԱ-ՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնակարանային շինարարության գարգացման թափը կախված է և այն հանգամանքից, թե արդյոք վորքան են լայն մասսաները հայտնաբերում իրենց ինքնագործունեյությունը շինարարական ասպարիֆում։ Վորքան մասսայական կոլլեկտիվները իրենց նյութական միջոցներով անմիջապես մասնակցում են շինարարության գործում, կառուցելով շենքեր իրենց ընակարանացին պահանջման բավարարելու համար, այնքան ընակարանային ձգնաժամը հետպհետեւ մեղմանում է։ Միայն պետական ոգնությամբ ու նյութական միջոցներով չի կարելի բավարար չափով լուծել ընակարանային շինարարության խնդիրը, յեթե ինքը ընակչությունը ակտիվ կերպով չի մասնակցում շինարարության գործին։

Դեռ 1924 թ. Համ Կ. Կ. XIII համագումարը առան-

ձին ուշադրություն և գալքը ել այս հաճամանքի վրա : Այս առթիվ կայացված վորոշման մեջ ասված և , վոր «Բնակարանային խնդիրը հետզետե ավելի ու ավելի յի գառնում բանվորների նյութական կենցաղի կարմոր խնդիրը , վորը կարող է հեշտ և հաջող կերպով լուծվել վոչ միայն պետական միջոցներով ու ոգնությամբ , այլ և ազգաբնակության ինքնազործունելությամբ և նրա նյութական մասնակցությամբ : Այդ ինքնազործունելության ամենալավ ձեն և հանդիսանում բնակարանային կոռպերացիան , վորը և կվերացնի աշխատավորների բնակարանային կարիքը » . . . Այդ վորոշման հիման վրա Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն առաջարկել և տեղական կազմակերպություններին ցույց տալ ակտիվ մասնակցություն բնակարանային կոռպերատիվներ կազմակերպելու գործում : 1925 թ . Կուսակցության Կենտկոմը նորից ընդգծում և , վոր Կուսակցական , պրո-ֆեսիոնալ և խորհրդային կազմակերպությունները ի-րենց ամբողջ ուշադրությունը պիտի դարձնեն առաջին հերթին բանվորների բնակարանային կարիքը վերացնելու վրա , բոլոր միջոցներով զարգացնելով բանվորական բնակարանային շինարարությունը . և այս առթիվ Կենտկոմը տալիս և տեղերին մի շարք կազմակերպչա-կան բնույթ ունեցող դիրեկտիվներ :

Ահա այն նշանակությունը , վոր ունեն բնակարա-նային շինարարական կոռպերատիվ ընկերությունները , վորպես կոլլեկտիվ կառուցողներ , ակտիվ կերպով ցույց են տալիս ինքնազործունելություն շինարարության ասպարիդում : Միութենական Կենտկոմի և Քաղ-իորհրդի 1928 թ . Հունվարի 4-ի «Բնակարանային քա-ղաքականության մասին» վորոշման մեջ պարզ կերպով շեշտված և , վոր բնակարանային շինարարության գոր-ծում մասնավոր կապիտալը ասպարեզ քաշելու նպաստա-կով անհրաժեշտ և զարգացնել համաքաղաքացիական բնակարանային - շինարարական կոռպերացիայի գոր-ծունելությունը (ԽՍՀՄ Որենք . Ժող . 1928 թ . № 6 . Հոգ . 49) :

Բնակարանային կոռպերացիայի կանոնագրությու-նը հրատարակված և Միության Կենտգործկոմի կողմէց դեռ 1924 թ . ողոստոսի 19-ին (Խ .Ա .Հ .Մ . Որենք . Ժող .

1924 թ . № 5 .) : Բայտ այդ կանոնագրության բնակարա-նային կոռպերատիվ ընկերությունները բաժանվում են . . .

1 . Բնակարանային - վարձակարական կոռպերատիվ ընկերության ,

2 . բանվորական բնակարանա - շինարարական կոռ-պերատիվ ընկերության ,

3 . համաքաղաքացիական բնակարանա - շինարարա-կան կոռպերատիվ ընկերության :

Մեր նպատակի համար եյական նշանակություն ու-նեն վերջին յերկու տեսակ շինարարական կոռպերատիվ-ները , ուստի առաջնի վրա մենք կանգ չենք առնի , քանի վոր դրանք կազմակերպվում են տեղական տնտեսու-թյան մարմինների կողմից և նրանց վարձով են տրվում քաղաքայացված աները ոգտագործելու նպատակով :

Իսկ բանվորական և համաքաղաքացիական բնակա-րանա - շինարարական կոռպերատիվ ընկերությունները , վորպես կոլլեկտիվ կառուցողներ , ակտիվ կերպով ցույց են տալիս ինքնազործունելություն շինարարության ասպարիդում : Միութենական Կենտկոմի և Քաղ-իորհրդի 1928 թ . Հունվարի 4-ի «Բնակարանային քա-ղաքականության մասին» վորոշման մեջ պարզ կերպով շեշտված և , վոր բնակարանային շինարարության գոր-ծում մասնավոր կապիտալը ասպարեզ քաշելու նպաստա-կով անհրաժեշտ և զարգացնել համաքաղաքացիական բնակարանային - շինարարական կոռպերացիայի գոր-ծունելությունը (ԽՍՀՄ Որենք . Ժող . 1928 թ . № 6 . Հոգ . 49) :

Նկատի ունենալով այս յերկու տեսակ շինարար-կան կոռպերատիվ ընկերությունների խոշոր նշանակու-

թյունը, անհրաժեշտ է կանգ առնել նրանց վրա և պարզել, թե արդյոք ինչ զանազանություն կա այդ յերկու կոռպերատիվ ընկերությունների միջև, և ինչ արտօնություններ ունեն նրանք: Այդ կոռպերատիվ ընկերությունների նպատակը մի յիշ—կառուցել նոր շենքեր, բանդված բնակելի շենքերը վերականգնել և կիսատեւրը ավարտել՝ իրենց անդամների բնակարանային կարիքը բավարարելու համար:

Ինչ վերաբերում է ընկերության անդամների կազմին, ապա այսուեղ հարկավոր է ընդդեմ հետեւում —

Համաձայն գործող որենսդրության բանվորական բնակարանային—շինարարական կոռպերատիվ ընկերության անդամ կարող են լինել 18 տարին լրացրած բանվորները, նաև պետական, հասարակական, կուսակցական և կոռպերատիվ հիմնարկությունների ու ձևոնարկությունների ծառայողները (ՀՍԽՀ Որ. Ժող. 1925 թ. № 3, Հոդ. 4, բաժ. 2) ։ Բայց համաքաղաքացիական բնակարանային—շինարարական կոռպերատիվ ընկերության անդամ կարող են լինել 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները, վերոնք դատարանի կողմից չեն զրկված քաղաքացիացիներից, նյութական գույքային իրավունքներից, նյունավելու մասնավոր իրավական անձինք (կազմակերպություններ, ընկերություններ և այլն): Ուրիշ խոսքով՝ յեթե բանվորական բնակչին կոռպերատիվներում մասնակցում են բանվորներ և խորհրդային կառուցողներ ու հասարակական կազմակերպությունների աշխատակիցները, ապա համաքաղաքացիական բնակչին կոռպերատիվների անդամ կարող է լինել ամեն մի քաղաքացի, վոր չի պատկանում բանվորների ու ծառայողների՝ կարգին.

Որինակ՝ արհեստավորները, տնայնագործները, աղասի պրոֆեսիալի տեր անձինք, վաճառականները և այլն այս և զվարավոր զանազանությունը: Ինչ իրավունքները են վայելում այդ շինարարական կոռպերատիվ ընկերությունները: Յերկուսն ել նոր շենքեր կառուցելու կամ քանդված բնակելի շենքերը վերականգնելու համար կառուցման իրավունքի հիման վրա կոմունալ բաժիններից ստանուած բնական քաղաքացիները, վորոնք կառուցման իրավունքի հիման վրա շենքեր են կառուցում և ոգտագործում մինչև 65, 60 և 50 տարի ժամանակով, նայած չենքի բնույթին, ինչպես մենք պարզել ենք այս գրքույկում, ապա բանվորական և համաքաղաքացիական բնակարանա—շինարարական կոռպերատիվ ընկերություններին հողամասերը հատկացվում են իրենց ընտրությամբ, կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրի ժամանակամիջոցի սահմաններում (65, 60 և 50) կամ անորոշ ժամանակով ոգտագործելու համար: Վերջին դեպքում կառուցված շենքերը պատկանում են նրանց՝ սեփականության իրավունքի հիմունքով (ԽՍՀՄ Որ. Ժող. 1928 թ. № 2, Հոդ. 14):

Որենքը այդ շինարարական կոռպերատիվ ընկերությունների համար սահմանելով այսպիսի արտօնություններ, միաժամանակ ընդդում է, վոր բանվորական—շինարարական կոռպերատիվ ընկերությունը կարող է կառուցման իրավունքը և այն շենքերը, վորոնք պատկանում են նրանց սեփականության հիմունքով, ոտարել վոչ ամեն մեկին, այլ միայն պետական մարմիններին և բանվորական բնակարանա—շինարարական կոռպերատիվ այլ կազմակերպությունների, իսկ համա-

բաղաքացիական բնկարանա-շինարարական կոռագերա-
տիլ ընկերությունները—միայն պետական մարմիննե-
րին կամ կոռագերատիվ կազմակերպություններին։ Որեն-
քը ներկա դեպքում այն նպատակն է ունեցել, վորագեսզի
այն չենքերը, վորոնք կառուցվել են արտոնյալ պայ-
մաններով, չանցնեն անաշխատ տարրերի տրամադրու-
թյան տակ, վորոնք, ոգտվելով այդ ընկերությունների
նյութական նեղ գրությունից, կարող են չնչին գումա-
րով ձեռք բերել նրանց կառուցած չենքերը։ Նույն
սկզբունքը կիրարկվում է և այն դեպքում, յերբ որենքը
սահմանում է, վոր բնակարանային կոռագերատիվ ընկե-
րությունները կառուցման իրավունքը և չենքերը կարող
են գրավ գնել միայն պետական մարմինների, կոռագերա-
տիվ կազմակերպությունների և վարկային ընկերու-
թյունների մոտ։

Ահա այն եյտկան կետերը, վորոնք հատուկ են բնակ-
շինար-կոռագերատիվներին։ Մենք այսուղ կանգ չենք
առնում նրանց կազմակերպական հարցերի վրա, այ-
սինքն՝ նրանց ընդհանուր ժողովների, վարչության,
անդամների փրավունքների և պարտականությունների և
այլ հարցերի վրա, վորոնք նախառեսլած են այդ ընկե-
րությունների որինակելի կամոնագրություններով
(հաստատված ժողկոմիտրհի կողմից 1925 թ. հունվարի
19-ին Որենք. Ժող. 1925 թ. № 3, Հոդ. 4, բաժ. 2),
իսկ ինչ վերաբերում է համարակարացիական բնակ-
շին-կոռագերատիվների կազմակերպական հարցերին,
ապա մանրամասնությունները զետեղված են 1924 թ.
ոգսոսոսի 19-ի «Բնակարանային կոռագերացիայի մա-
սին» միութենական վորոշման մեջ (ԽՍՀՄ Որենք. Ժող.
1924 թ. № 5)։

Ի վերջո հարկավոր և ընդգծել այն վարկային ար-

տոնությունները, վորոնք տրվում են բանվորական
և համաքաղաքացիական բնակչին կոռագերատիվներին։

Յերկուսն ել, վորագես կոլլեկտիվ կառուցողներ, ա-
ղատվում են պետական և տեղական հարկերից յերեք
տարվա ընթացքում, հաշված չենքերը կառուցելու ո-
րից։ Իսկ այդ ժամանակն անցնելուց հետո այդ բնաշին-
կոռագերատիվները մնացած ժամանակի ընթացքում
վճարում են հասանելի պետական և տեղական հար-
կերի ու տուրքերի կեսը (50%), յեթե կառու-
ցած չենքերի տարածությունը ամբողջ տարածու-
թյան 75%-ից պակաս չե։ Իսկ յեթե կոմունալ
բաժնների կողմից հողամասերը հատկացված են
նրանց անորոշ ժամանակով ոգտագործելու համար,
ապա այդ արտօնությունները իրենց ուժի մեջ են մնում
30 տարվա ընթացքում։ Ընդգծենք նույնպես, վոր այդ
ընկոռագերատիվների անդամների իրավունքները ու
պարտականությունները նրանց մահից հետո անցնում
են նրանց ժառանգներին (իրավահաջորդներին), իհարկե
կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանագրերով
նախառեսլած ժամանակամիջոցի սահմաններում։

Քացի սրանից բանվորական բնակչին կոռագերատիվ
ընկերությունները ունեն և հատուկ արտօնություններ։

Բանվորական շինարարության համար պետության
կողմից հիմնվում են հատուկ ֆոնդեր, սահմանվում են
սոցիալական ապահովագրության տարիՓի արտօնյալ
կոպարներ, շինանյութերը և սարքագործան առարկա-
ները հատկացվում են բանվորական շինարարության
կարիքների համար արտօնյալ պայմաններով, և այն
ձևնարկություններին ու կազմակերպություններին,
վորոնք փոխադրում են այդ նյութերը, արգում և զեղչ

զոյտոթյուն ունեցող սակագնի 25%-ի չափով և այլն:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր Խորհրդային հՀանությունը բնակարանային շինարարությունը զարգացնելու և բնակելի տարածությունը ավելացնելու նպատակով մի շարք կարեռ արտօնություններ և տալիս մասնավոր անձանց և ընկերություններին, յեթե վերջինները իրենց կապիտալը դնում են բնակարանային շինարարության գործի մեջ:

Միութենական ժողկոմիորհը իր ապրիլի 17-ի որենքով քաղաքացիներին, նաև մասնավոր իրավական անձանց իրավունք և վերապահում կազմակերպելու բաժնետիրական (ակցիոներական) ընկերություններ խոշոր շենքեր կառուցելու ու ոգտագործելու նպատակով: Նույն որենքով թույլատրվում և քաղաքացիներին հիմնել նաև շինարարական գրասենյակներ (ստրուտ, կոնտոր), կապալով շենքեր կառուցելու նպատակով, առանց սահմանափակելու վարձու բանվորների թիվը: Նույն գրասենյակները կարող են նաև իրենց կարիքների համար և իրենց հաշվով շենքեր կառուցել և ոգտագործել:

Որենքը այդպիսի խոշոր տներ կառուցողներին տալիս ենակ մի շարք իրավունքներ ու արտօնություններ, գործնք նախատեսված են ԽՍՀՄ ժողկոմիորհի «Մասնավոր կապիտալի հաշվով կատարվող բնակարանային շինարարությունը խրախուսելու միջոցների մասին» գործամքը, վորը կցվում և այս գրքույթին: Այս գրքույթին կցվում են նաև «Բնակարանային քաղաքականության մասին» միութենական նոր որենքը, վորը հսկայական նշանակություն ունի շինարարական գործում:

«Ազգային գրադարան



NL0193178

ՀՍԽՆ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀԱԽԵԶ Սահմանադրություն (մատչելի պարզաբ.).
2. Նույնը—թուրքերեն.
3. *ա)* Կանոնագրություն քաղխորհուրդների.
բ) Հրահանգ գլուղխորհրդի անդամների իրավունքների և պարտականության մասին, (թուրքերեն).
գ) Հրահանգ գլուղխորհրդի սեկցիաների մասին,
դ) Կանոնագրություն գլուղխորհրդի վերաբ. հանձ.
4. Հրահանգ քաղ. և գլուղ. խորհուրդների ընտրությունների և խորհուրդների համագումարներ հրավիրելու մասին.
5. Նույնը—թուրքերեն.
6. Նույնը—սահերեն.
7. Գլուղխորհրդների դատական սեկցիաների մասին (մատչելի պարզաբան.)
8. Նույնը—թուրքերեն.
9. Գլուղխորհուրդների իրավունքներն ընդլայնելու մասին (մատչելի պարզաբանություն).
10. Ամուսնություն, ընտանիքի և խնամակալության մասին (մատչ. պարզաբ.).
11. Նոր ընակարանային որենք (մատչ. պարզաբ.).
12. Գլուղխորհուրդների իրավունքներն ընդլայնելու մասին (մատչ. պարզաբ.) թուրքերեն.
13. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Արևնողիլք—թուրքերեն.